ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091 435136 Է. հասցե՝ foi@foi.am,
www.foi.am, www.ogp.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

10.08.2015թ
258-1-ի

ՀՀ արդարադատության նախարարի
պաշտոնակատար
պարոն Արսեն Մկրտչյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մկրտչյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպությունն իրականացնում է Բաց կառավարման գործընկերություն միջազգային նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Գործողությունների ծրագրի իրականացման մոնիտորինգ:

Մոնիտորինգի անցկացման համար խնդրում ենք տրամադրել Գործողությունների ծրագրի ութերորդ հանձնառության իրականացմանը վերաբերող հետևյալ տեղեկությունները.

1. 2015թ.-ի օգոստոսի 1-ի դրությամբ պետական կառավարման մարմինների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման ընդհանուր առցանց հարթակի ստեղծմանն ուղղված ի՞նչ կոնկրետ քայլեր են արվել.
    - տեխնիկական լուծումների վերաբերյալ քննարկումների անցկացում, առաջադրանքի ձևավորում,
    - հրապարակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրավական հիմքերի ստեղծում,
    - գերատեսչությունների պատասխանատու մասնագետների ուսուցման գործընթացի ապահովում
    - և այլ:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:
Շուշան Դոյդոյան
ԻԱԿ նախագահ